ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 օգոստոսի 2019թ. թիվ 497-Ա

Շ.ԱՎԱԳՅԱՆԻՆ «ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի օգոստոսի 5-ի թիվ 493-Ա որոշումը և հաշվի առնելով Շ. Ավագյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Շուշանիկ Ավագյանին նշանակել «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Շ.Ավագյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 12-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. օգոստոսի 9
ք.Վանաձոր